

Վարկային շուկայի ճգնաժամ.

իրավիճակը շտկելու համաշխարհային գործընթացները

Մարինե Մանուչարյան, փորձագետ

ԱՄՆ-ում ամփոփվեցին աշխարհի կենտրոնական բանկերի վարկային ճգնաժամի բացասական հետևանքների նվազեցման համատեղ ծրագրի շրջանակներում կայացած հատուկ աճուրդի արդյունքները, որը անցկացրեց ԱՄՆ Դաշնային ռեզերվային համակարգը (ԴՌՀ): 20 մլրդ ԱՄՆ դոլար գումարի տեղերը ցույց տվեց, որ բանկերը խելահեղ ձևով ձգտում են ավելացնել իրենց կանխիկ պահուստների ծավալները, ընդ որում իրենց չեն վախեցնում բարձր տոկոսադրույթները: Վարկային հաստատությունները գրեթե հարձակվեցին ԴՌՀ-ի գումարների վրա, ներկայացնելով աճուրդին 93 հայտ ընդհանուր գումարով 61,6 մլրդ ԱՄՆ դոլարի չափով, ինչը գերազանցեց առաջարկը երեք անգամ: Մասնագետները նշում են, որ այս բարձր իրարանցումը բանկային միջավայրում նշանակում է միայն մեկ բան՝ հիմնախնդիրները ֆինանսական աշխարհում հասնում են ահռելի մասշտաբների:

Պարզվեց, որ ԴՌՀ-ի փորձը մեղմացնել վարկային ճգնաժամը՝ շուկա դուրս գցելով 20 մլրդ ԱՄՆ դոլար դրամական միջոցներ, բանկերի համար իրենց գործառնությունները փրկելու գրեթե միակ միջոցն էր: ԴՌՀ-ն պնդում էր, որ աճուրդը կայանալու է բանկային գործառնություններ իրականացնող հաճախորդների շահերից ելնելով և որպեսզի այդ միջոցները հասանելի դառնան քանակով ավելի շատ բանկերի համար, ամեն բանկին թույլատրված էր ներկայացնել առավելագույնը 2 հայտ: Միջոցները պետք էր վերադարձնել 28 օրից, ավելացնելով վերադարձվող գումարի վրա 4,65% տարեկան տոկոսադրույթով հաշվարկված տոկոսներ:

Մասնագետները կարծում էին, որ պահանջարկը այդքան իրարանցումային չէր լինի, իսկ տոկոսադրույթը ձգտելու է 4,25-4,75% միջակայքի ստորին սահմանին: Շուկային հետևող ներդրողները, որոնք ցանկանում էին հասկանալ արդյունավետ են արդյոք ԴՌՀ հակաճգնաժամային փորձերը, տարակուսած հայտնեցին, որ միջոցների պահանջարկը ահռելի է: Սա խոսում է մեծամասշտաբ հիմնախնդիրների մասին, որոնց և բախվեցին վարկային հաստատությունները գլոբալ ճգնաժամի ժամանակ:

The Wall Street Journal-ին տրված հարցազրույցում Լոուրենս Սամմերսը, որը Բիլ Զլիթսոնի վարչակազմում եղել է ֆինանսների նախարար, հայտնեց, որ տնտեսական անկման կանգնեցման համար կպահանջվի ոչ թե 20 մլրդ ԱՄՆ դոլար, այլ առնվազն 75 մլրդ ԱՄՆ դոլար: Աճուրդը նաև ցույց տվեց, որ ԴՌՀ-ն և այլ երկրների կենտրոնական բանկերը կարող են ներագդել իրավիճակի վրա ավելի արդյունավետ, քան այն տեղի է ունենում ներկայումս, ընդ որում հենց բանկերն են առաջին հերթին շահագրգռված լինելու այդպիսի կայունացնող միջոցառումների իրականացման համար: Հաջորդ աճուրդը 20 մլրդ ԱՄՆ դոլար գումարի չափով վաճառքների երկու փուլով տեղի կունենա 2008թ. հունվարին:

Եվրոպական կենտրոնական բանկը (ԵԿԲ) նույնպես անցկացրեց դրամական միջոցների 20 մլրդ ԱՄՆ դոլարի աճուրդ, ընդ որում ԵԿԲ վարկերի պահանջակը նույնպես բարձր էր: Անգլիայի Բանկը նույնպես բանկերին առաջարկեց 10 մլրդ ֆուտ ստերլինգ (20,1 մլրդ ԱՄՆ դոլար), սակայն այս միջոցների պահանջարկը ավելի զսպված էր: ԵԿԲ կողմից եվրոյի իրացվելիության ավելացումը բերեց միջանկյալ փոխարժեքների նվազմանը, ընդ որում ոչ միայն եվրոյի, այլ նաև այլ արժույթների համար: Սակայն հավանաբար ինչպես երևում է, աճուրդների արդյունքների հայտարարությունները, ինչպես նաև հենց իրենք՝ աճուրդները, Եական Էֆեկտի չբերեցին: Շուկայական հեռանկարի տեսանկյունից կենտրոնական բանկերը ներկայումս պետք է ավելի մտածված միասնական դրամավարկային քաղաքականության իրականացնեն և հետագա անելիքների ընդհանուր մտածողությունը դրսեվորեն, որը սակայն բավարար մակարդակի վրա չէ առայժմ:

